

ՏԱՍՆ ԵՒ ԵՐԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 բուր, կէս տարվանը 6 բուր: Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են Խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Հասարակութիւնը և մամուլը.—Ներքին Տեսչութիւնը, Պրոֆէսոր Բերովը և Պատկանեան. Գաղափարային թատրոնի շինութեան հարցը. Գիւղատնտեսութիւնը արհեստի հետ. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արքեպիսկոպոսի լուրեր. ԹԱՌՆ. ԼՈՒՐԵՐ.—ՀՆՈՒՍԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍՍ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՍՈՒԼԸ

Երբ տան և եօթ տարի առաջ «Մշակը» սկսեց հրատարակվել, մենք բոլորս, խմբագրութեան անդամներս, զեռ երիտասարդ էինք, իրենց լինելով լի և կատարելապէս հաւատով էինք վերաբերվում զէպի բարին, զէպի ազնիւր, զէպի մարդկին... Տասն և եօթ տարվայ ընթացքում մենք բոլորս բաւական փորձեցանք, բաւական հիասթափվեցանք, նշանաւոր կերպով փոխեցինք մեր հայեացքները մարդկանց վերաբերման, բաւական կորցրինք հաւատ զէպի մարդկանց ազնւութիւնը, մի խօսքով բաւական փորձեցանք:

Կար ժամանակ, երբ մենք անպայման հաւատում էինք մարդկանց ազնիւ խօսքին, հաւատում էինք մեր հասարակութեան լաւագոյն մասի հետ անկեղծաբար և համբարշտ կերպով դործելու, առաջ դնալու հնարաւորութեան... Գեռ այն ժամանակ մենք հաւատում էինք մեր հասարակութեան լաւագոյն մասի եռանդին, հաւատում էինք, որ մեր հասարակութեան երիտասարդ, ինտելիգենտ մասը ընդունակ է ընտելանալ ինքնաձայնաւորութեան, պարտաճանաչութեան և ինքնագործունէութեան... Մյուս հետեւ շատ անգամ մեր կրած դառն փորձերը մեզ համոզեցին անմիջապէս իրականութեան մէջ, համոզեցին մեզ որ մեր հասարակութեան լաւագոյն մասը մասն էլ որ և է գիտակցական հասարակական գործունէութեան համար դեռ ևս անպատրաստ է: Մենք փորձեցանք, որովհետեւ շատ անգամ խաբարեցինք եղել մեր յոյսերի մէջ... Հիմա այլ ևս հեշտութեամբ չենք հաւատում մարդկանց, և այդ պատճառով չենք յափշտակվում նրանց խոստումներով և հաւատ չենք ընծայում նրանց տուած ազնիւ խօսքին:

Այդ տեսակ անմիջապէս իրականութեան մէջ մեզ համոզելու առիթները բազմաթիւ էին մեր երկարամեայ հասարակական գործունէութեան մէջ: Պատահում էր մի որ և է ընտրութիւն, լինէր դա ծխական պատգամաւորների, դպրոցական հոգաբարձուների, քաղաքային վարչութեան, կամ որ և է ընկերութեան ընտրութիւնը.— և մենք կատարելապէս հաւատով էինք վերաբերվում զէպի մարդկանց խոստումները և նրանց տուած ազնիւ խօսքը որ այս ինչ մարդուն, այս ինչ սկզբունքին հաւատարիմ կը մնան, իսկ ուրիշ կողմից՝ այն ինչ սկզբունքին, այն ինչ մարդուն անպայման հակառակ կը լինեն... Գալիս էր ընտրութեան օրը.— և մենք համոզվում էինք որ ոչ հաստատ կուտակցութիւն կայ, ոչ համոզմունք, ոչ խոստումնաւորութիւն և ոչ էլ տուած ազնիւ խօսքին հաւատարիմ լինելը... Ով որ խոստացել էր ընտրութեան ժամանակ պաշտպան հանդիսանալ այս ինչ սկզբունքին.— ընտրութեան օրակին դաւանում էր իր խոստման. ով որ ազնիւ խօսք էր ասելիս այս ինչ մարդուն սե ջուէ գցելով.— ընտրութեան օրակին, ընդհակառակն, ըստ պիտակ էր գցում նրան, և այն... Այդպիսով անհնարին էր լինում որ և

է խոստման, որ և է ազնիւ խօսքին մազի չափ անգամ հաւատ ընծայել...

Եւ ահա մամուլը, որը առաջ հաւատում էր թէ կարելի է հասարակական ընթացիկ հարցերում հասարակութեան հետ ձեռք ձեռքի տուած համբարշտութեամբ առաջ ընթանալ.— անդադար հիասթափվում էր, յուսահատվում էր, վերջի վերջոյ համոզվելով թէ մեր հասարակութեան մէջ չէր կայ ոչ հաստատ համոզմունք, ոչ խոստումը կատարելու պարտաւորութեան դադար, ոչ էլ տուած ազնիւ խօսքը պահելու պարտաճանաչութիւնը:

Եւ ահա մամուլը հետզհետէ առանձնանում էր հասարակութիւնից, հետզհետէ խորթ էր դառնում իրան հասարակութեան ժամանակակից սերունդի շրջանում, աւելի և աւելի համոզվելով որ պարտաւոր լինելով անտես առնել ժամանակակից անազնիւ սերունդը, որի հետ, նրա դաւաճան ողու պատճառով, համբարշտութեամբ դործել անհնարին էր.— Կէտք է սպասէ որ ներկայ սերունդն անցնի, պէտք է իր համար նպատակ դնէ կրթել, պատրաստել հասարակական ազնիւ գործունէութեան համար մի նոր սերունդ, պէտք է կոչված լինի ոչ թէ հասարակութեան հետ համբարշտութեամբ դործելով, ժամանակակից ընթացիկ հարցերը ղեկավարելու և լուծելու.— այլ անպաշտպան համար կրթելու ինքնաձայն, պարտաճանաչ, ազնիւ, ինքնագործունէութեան համար ընդունակ մի նոր հասարակական սերունդ... Արդեօք, տան և եօթ տարուց յետոյ, հասնել է այն ժամանակը, երբ սկսում է մեր մէջ կազմակերպվել մի քանի տասնեակ մարդուց բաղկացած ինքնաձայն, պարտաճանաչ, իր առաջ ազնիւ խօսքի տէր երիտասարդ սերունդ.— թէ դա պարճեալ մի ժամանակակար, խաբուսիկ երևոյթ է... այդ մեզ դժուար է ասել:

Վախենում ենք յուսալ, որ դարձեալ չը խաբարեցինք մեր յոյսերի մէջ: Գոնէ մեր հասարակական կեանքի ամենավերջին երևոյթները մեզ անպաշտպան, որ մեր մամուլը համար մեր հասարակութեան հետ ձեռք ձեռքի տուած ընթանալ որ և է հարցում՝ անհնարին է, և «Մշակը» շատ լաւ է անում որ իրան հետեւ է պահում ամեն տեսակ հասարակական ընթացիկ հարցերին վերաբերեալ ազնիւ գիտակցական և մերժում է այդ հարցերին գործնականապէս մասնակցելու.— քանի որ պարզ տեսնում է թէ նոյն անմիջապէս երևոյթները, որոնք տեղի էին ունենում տարիներէն ի վեր, կրկնվում են և մինչև այժմ այն է՝ անպատրաստութիւն որ և է հասարակական գործունէութեան համար, վերին աստիճանի անշարժութիւն և անտարբերութիւն, ամեն տեղ ինամուլութիւն, եռանդի բացակայութիւն, ինքնագործունէութեան անընդունակութիւն և այդ բոլորի հետ միասին՝ կեղծաւորութիւն, դաւաճանութիւն պաշտպանած բազմաթիւների, ազնիւ խօսք տալը և վճռողական րօպէում այդ ազնիւ խօսքի լըրբաբար կորելը, վերջապէս ամեն բանում կոպիտ, ասիական խաբարեցութիւն... Այդ է պատճառը որ ժամանակակից հայոց մամուլը պէտք է կամայ ակամայ այն համոզմունքին հասնի, որ ոչ թէ միայն չէ կարող ներկայ սերունդին հետ համբարշտութեամբ դործել, բայց և չէ կարող ներկայ սերունդին համար դործել չէ կարող այդ արդէն փչացած, սպառնալից, խաբարեց սերունդի վրա որ և է բարեբար, կրթիչ ներգործութիւն ունենալ.— այլ պէտք է գործէ միմիայն անպաշտպան համար, իր համար նպատակ դնելով կրթել մի աւելի բարոյական, մի աւելի ազնիւ, մի աւելի պարտաճանաչ և պատաճանաչ նոր սերունդ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՐՈՖԷՍՈՐ ԲԵՐՈՎԻՔԻ ՊԱՏԿԱՆԵԱՆ

«Մշակի» անցեալ համարում հաղորդեցինք մեր ընթերցողներին մի բովանդակ լուր Պետերբուրգից: Ապրիլի 2-ին երեկոյան, Պետերբուրգում վախճանվեց համալսարանի արեւելեան ֆակուլտետի հայոց լեզուի պրոֆէսոր՝ Բերովը: Պետերբուրգի Պատկանեան

Պարտաւորութիւն ենք համարում մի քանի դոնէ կարճատեւ սեղանակիցները տալ հանդուցեալի մասին, որ բարի եղաւ մեզ հաղորդելու հանդուցեալի եղբայր, պ. Սերովը: Պատկանեան

Պրոֆէսոր Ս. Պետերբուրգի համալսարանի, արեւելեան ֆակուլտետի, յատկապէս Հայոց Լեզուի և Արեւելի պատմութեան ամբիօնի, գաղտնի խորհրդական Բերովը: Պետերբուրգի Պատկանեան, ծնվել է մայիսի 7-ին, 1833 թ-ի, Կովկասում, Ստավրոպոլ քաղաքում: Աւարտած լինելով Մոսկվայի Լազարեան ճեմարանում իր ուսումը, երիտասարդ Պատկանեան մտնում է Գորպատի համալսարանի աստուածաբանական ֆակուլտետը, որտեղից, իր ուսումը աւարտելուց յետոյ, անցնում է որպէս ուսանող Պետերբուրգի համալսարանին կից Նիմիլիսի Պետերբուրգի Ինստիտուտը, որտեղ և աւարտում է իր ուսումը 1856 թ-ին:

Արդէն 1858 թ-ին Բերովը: Պատկանեան նշանակվում է պրոֆէսոր Պետերբուրգի համալսարանի Արեւելեան բաժնում և նրան յանձնվում են այդ ֆակուլտետում թէ հայոց Լեզուի և թէ արեւելի պատմութեան ամբիօնները: Այդ թիվը սկսած, ուրիշ 30 տարի շարունակ հանդուցեալը վարում էր պրոֆէսորի պաշտօնը, այդ ժամանակակից ինստիտուտի լինելով արեւելեան գրականութեան, լեզուագիտութեան և պատմութեան մշակութեանը թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ ֆրանսերէն լեզուներով գրված բազմաթիւ ուսումնական ձեռնարկներով:

Հանդուցեալի հուշակը, որպէս ուսումնական լեզուագիտի և պատմաբանի, շուտով սկսում է տարածվել և յարգույթով և նա դառնում է անգամ՝ Բերովին, Փարիզի, Լոնդոնի և ուրիշ մի քանի ակադեմիաների:

Հանդուցեալը 56 տարեկան էր, ուրիշն այնպիսի հասակում էր գտնվում, երբ մարդուս ուղիղ դեռ թաղ էր, երբ ուսումնական կարող էր դեռ շատ և շատ բան արդիւնաբերել, դեռ բազմաթիւ ուսումնական գրուածներ ընծայել գիտութեանը:

Բայց մի ծանր և երկարամեայ նեղքին հիւանդութիւն վաղուց մաշում էր հանդուցեալի ֆիզիկական ոյժերը և վերջապէս ներկայ տարվայ ապրիլի 2-ին մահը լսեց նրան ուսումնական աշխարհից, երբ հանդուցեալը դեռ շատ տարիներ կարող էր օգտակար լինել լեզուագիտութեան և արեւելի պատմութեան խոյնաւոր և լուրջ ուսումնասիրութեան գործին:

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ ԹԱՌՆԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Մի քանի ամիս է արդէն, որ Թիֆլիսի նոր թատրոնի շինութեան հարցը պարբերական, հերթական հարց է դառնում քաղաքային դուռնային համար: Հասարակութեանը արդէն յայտնի է այդ դործի երկարութիւնը. կառավարութիւնը իր հաշուով կառուցանելով թատրոնի շինութիւնը և այդ նպատակի համար հարկեր հաղարներ ծախսելով, այժմ այլ ևս չէ կամենում շարունակել շինութեան գործը, թէ և խիստակէս նոր թատրոնը միանգամայն աւարտելու համար համեմատաբար քիչ գործ է մնում: Բաղադրային վարչութեան մէջ հարց է յարուցված շինութեան աւարտելը քաղաքի վրա առնելու, որով և վերջի վերջոյ նոր թատրոնի ահագին և թանկագին շինութիւնը կը դառնայ քաղաքի սեփականութիւն:

Այդ մասին արդէն գրաւոր բանակցութիւններ են եղել քաղաքի և կառավարութեան մէջ, որոշված են թատրոնից օգտվելու իրաւունքի պիտակները, և մնում է, որ կամ քաղաքը վճար յանձնառնել շինութեան աւարտելը, և կամ որոշակի յայտարարէ, որ ինքը չէ ուղղում խառնվել այդ գործում:

Եւ ահա հէնց այդ հարցն է, որ մի քանի ամից ի վեր տաք վիճարանութիւնների նիւթ է տալիս մեր ձայնաւորներից շատերին, որոնցից շատերը թատրոնի շինութեան հարցը մահաւանայ բռնելով իրանց հեռաւորական տաղանդը փայլեցրին: Թատրոնի շինութեան հարցի առիթով դուռնային կազմված է և մի առանձին յանձնաժողով, այդ յանձնաժողովը որոշել է թատրոնից օգտվելու եղանակը, քաղաքի ունենալի իրաւունքները և զլիսաւորապէս այն օգուտը, որ մի քանի տարուց յետոյ քաղաքը կարող է ստանալ:

Բացի դրանից մտաւորապէս ստացած է և այն, թէ որքան ծախս է պահանջում թատրոնի շինութիւնը, և նախահաշուով այդ ծախսը համարում է մինչև 250 հազարի:

Բայց որտեղից վերցնել այս գումարը,— ահա մի մեծ հարց: Ասում ենք մեծ հարց, որովհետեւ քաղաքի ֆինանսական գործերը նախանձելի չեն, և նա այդպիսի մի մեծ գումար բոլորովին չունի: Գումարի մէջ անուշաբակութիւններ են եղել փոխառութիւն անելու, կամ օրըկազմակերպողներ թողնելով և կամ տեղեկութեան բանկերի մէկից վերցնելով: Ի դէպ նկատեց, որ քաղաքային վարչութիւնը լաւ առիթ է համարում թատրոնի հարցը մեծ փոխառութիւն անելու համար, որպէս զի այդ փոխառութեան փողով ոչ թէ միայն թատրոնը շինվի, այլ և շինվին մի քանի ուրիշ բաներ, ինչպէս է քաղաքային սպանդանոցը, և մի և նոյն ժամանակ մեծացնել քաղաքային ջրբանջիլի ցանցը:

Գումարի ձայնաւորների մէջ թատրոնի շինութիւնը քաղաքի վրա վերցնելու խնդրը ջերմ վիճարանութիւններ յարուցանելով՝ բաժանել է այդ ձայնաւորներին երկու զլխաւոր բանակի. մի մասը թատրոնի շինութիւնը քաղաքի վրա առնելու կողմնակից է, միւս մասը հակառակ է:

Հակառակորդները այն կարծիքն են յայտնում, որ քաղաքը ուրիշ աւելի կարևոր ցաւեր ունի, և որ ունենալով քաղաքի մէջ երկու ուրիշ թատրոն, կարիք չը կայ հազարի, քաղաքի ոյժերից վեր ծախսեր անելու՝ նոր թատրոնի շինութեան համար, մանաւանդ որ նոր թատրոնից որ և է զրամական չափ ստանալն էլ շատ կասկածելի է: Կողմնակիցները պնդում են, որ նոր թատրոնը դրամական օգուտ քաղաքին անպատճառ կը տայ, և որ խելացիութիւն չէ, մի 200 հազարի համար զրկվել մի այնպիսի թանկագին շինութիւնից, ինչպիսին է այդ նոր թատրոնը:

Չար լեզուները պնդում են, որ նոր թատրոնի շինութեան զլխաւոր հակառակորդները այն ձայնաւորներն են, որոնք շատ մտ կապ ունեն կառուածական ազնւական բանկի թատրոնի հետ, այդ նոյն ձայնաւորները սրանից մի քանի տարի առաջ նոր թատրոնի շինութեան ջերմ կողմնակիցներ էին:

Սակայն թողնենք այդ անձնական դիտումները մեր բոլոր գործերի մէջ նկատելի են: Անցնենք հարցին: Ապրիլի 3-ի դուռնային նիստում, երկար վիճարանութիւններից յետոյ՝ ձայնների առաւելութեամբ վճարվեց, որ թատրոնի շինութեան հարցը պարզված է, և մնում է միայն, որ դուռնայի յաջորդ նիստում քուէարկվի այն խնդիրը թէ՛ աւարտել արդեօք քաղաքի հաշուով նոր թատրոնի շինութիւնը թէ՛ ոչ: Մենք կարծում ենք, որ դուռնային ձայների առաւելութեամբ այդ հարցին «այո» կը պատասխանի: Մեր քաղաքի հին թատրոններից մէկը ար-

դէն համարեա խարտու է, նա մի քանի տարուց յետոյ անպէտք կը դառնայ. քաղաքը մի թատրոնով բաւականանալ չէ կարող. ուրեմն անհրաժեշտ կը լինի բանուկ դարձնել նոր թատրոնը: Եթէ ինքն քաղաքը այդ նոր թատրոնը չաւարտի, կառավարութիւնը անկասկած տարիներ անցնելուց յետոյ կաւարտի և իր ձեռքը կառնի թատրոնի իրաւունքը: Բայց այդ ի հարկէ ձեռնուու չէ կարող լինել քաղաքին, քանի որ այժմ արդէն շինութեան գլխաւոր մասը պատրաստ է, և գործնական չէ, որ քաղաքը մի 200 հազարի համար զրկվի մի այնպիսի օգտակար հարստութիւնից, ինչպիսին կարող է լինել մօտիկ ապագայում քաղաքային նոր թատրոնը:

**ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ ԱՐՉԵՍԻՒ ԷՑՏ**

Գիւղատնտեսութիւնը առաջադիմած է համարվում այն ժամանակ, երբ նա կազմակերպված է յարմար և վայելուց գործիքներով: Յարմար և վայելուց գործիքները միջոց են տալիս գիւղատնտեսութեան աշխատանքների թիթեանպաշտ, ուրեմն և արժանութեան, արդիւնաբերած մթերքի աղիւ յատկութեան, ուրեմն և մրցութեան: Գիւղացին իր պարագումունքները առաջ տանելու համար անտարակոյս կարօտ է գործիքների: Նա դրան լրումն է տալիս դիմելով իր հարեան արհեստագործին: Բայց ինչ է արտադրում արհեստագործը: Նա արտադրում է այն ինչ որ արտադրել են իր նախնիները, առանց մաղի չափ անգամ չեղելու աւանդութիւններից և առանց ձգտելու որ և է կատարելագործութեան: Ընդհակառակը նրա արտադրած գործիքները մի որոշ չափով տարբերվում են հիններից իրանց ստոր յատկութեամբ էլ:

Շատ անգամ է պատահել լսել ժողովրդի բերանից նոր գործիքի հետ համեմատելով, մի որ և է հին գործիքի գերազանցութիւնը, որը չինած է եղել մեռած գնացած արհեստագործի ձեռքով: Ասել է թէ՛ նորերը այն առաւելութիւնը կամ արժանաւորութիւնը չունեն, ինչ որ ունէին իրանց նախորդները: Գրան կարելի է բացատրել դանազան և բազմաթիւ երկայնքով, որոնք իրանց ազդեցութեամբ փոխում են ժողովրդի կացութեան ընթացքը ու պայմանները և որոնց մէջտեղ բերելը մեր այժմի վեր է: Միայն ևս կանգ կառնեմ իրողութեան վրա:

Իրողութիւնը ցոյց է տալիս, որ մեր ժողովուրդը իր տնտեսական պայմաններով այն է, ինչ որ էր հարիւր կամ աւելի տարիներ առաջ: Սկզբնէն նրա բնակարանից, որի յարմարութիւնը իր անձի վայելչութեան համար է, սակայն ինչ ենք տեսնում. շատ անգամ նոյն խել գեանափոր խրճիթներ, խոնառ ու նեխված օդով մի խրճիթի մէջ 10—15 անդամներ բնակվելու: Գոյնը, ուր գետնիցում են գիւղացու աչքի լոյս անատունները՝ խաւար է, լցված է աղբով ու գարշահոտութեամբ, յատակը ցեխ, որից շատ անգամ, տիրապետող ստոտիկ տաքութեան պատճառով, դայանում են որդուները: Գիւղացու երկրագործութեան, զինեղործութեան, շերամապահութեան և այլ պարագումունքների եղանակները հնադարեան են: Նոյն դոկումենտ աւարը, նոյն մանուկներն ու գերանդին... Հարկատուութիւնը չը կայ երկար բացատրելու գիւղացու այժմեան յետադիմութիւնը տնտեսականութեան մէջ, մեր աչքի առաջ ներկայանում է նա իր կատարելա նահապետականութեամբ:

Մինչև այժմ մենք միայն լսեցինք քաղաքակրթված ազգերի տնտեսական առաջադիմութեան մասին, լսեցինք որ նրանք ունեն, օրինակ՝ հնձեւու, ցանկու, հերկելու, կալելու և ուրիշ շատ մեքենաներ: Մի խօսքով նրանք իրանց տնտեսականութեան բոլոր ճիւղերը հաստատել են մեքենաների օգնութեան վրա: Խնքն ու հնարագիտութիւնը նրանցում հասել է կատարելագործութեան և դա պատիւ ու փառք է բերում նրանց: Այնտեղ նրանց ապրելուը խնքն է ու հնարագիտութիւնը: Բայց մենք փորձել ենք օգտվել նրանց լսելից ու հնարագիտութիւնից—նչ: Մեզանից բացակայ է եղել այդ ամենը, իսկ երբ լսել ենք եւրօպացիների առաջադիմութեան մասին,—անփոյթ ենք մնացել: Ի հարկէ, դա ունի իր թէպէտ բնական, բայց անհերքելի պատճառները:

Սակայն կարելի է արդեօր գիւղացուն սթափեցնել իր հնազանդեան քննից: Քարոզել, լրբախուսել գիւղացուն, որպէս զի նա ձեռք վեր առնի իր աւանդական հին և անպէտք սովորութիւններից՝

ներկայ պայմաններում,—միայն աչոգութիւն կարող է ունենալ այն ժամանակ, երբ խօսքի հետ միասին երեւան կը գտն և գործնական օրինակները: Գիւղացիը իսկ որ գործնական ժողովուրդ են նրանք զիցուք երբ նկատում են, որ իրանց ընկերներին մէջը մի յեղափոխութիւն մտցրեց իր պարագումունքների մէջ, որը և աչոգութիւն ունեցաւ.—նրանք սկսում են հետեւ նրա օրինակին: Անա սոյնանման զէպքերը միայն կարողանում են խորտակել գիւղացու անգիտակցութիւնը... Խմ կարծիքով միակ կէքը ներկայումս գործնական օրինակներն են, որոնք կը սթափեցնեն գիւղացուն իր դարերը թմբուկիւնից և փոքր առ փոքր առաջադիմել կը տան իր կանոնաւոր տնտեսականութեանը, որի մէջն է նրա փրկութիւնը:

Այժմ, ես մասնաւորելով խօսքը, կամենում եմ մատնանել անել մի կարևոր հանգամանքի վրա: Յայտնի է, որ գիւղացու մէջ ձեռնուք է աւել գործակալութեան կամ պանդխտութեան ձգտումը: Չը զբաղվելով այս պանդխտութեան հարցով, որոնք արդէն իրանց դարգացած, հասակում ուրիշ ոչինչ չեն կարող անել եթէ ոչ բանի խօսք կան ծանր գործեր յանձն առնել, մի քանի խօսք կասեմ այնպիսիների մասին, որոնք իրանց մատղ հասակում նոյնպէս պանդխտացել և մեծ մասամբ դիմել են արհեստներին: Այդպիսիների թիւը քիչ չէ քաղաքներում: Իսկ գործարանական քաղաքներից վերցնում եմ ինձ աւելի ծանօթ Բազու քաղաքը: Բազուն պարտականելով իր մէջ գաղմթիւ արհեստների ճիւղերին, որոնք իրանց ուղղութեամբ հակասութիւն են կազմում անտիական յետադէմ արհեստների հետ: Այստեղ կան արտասահմանեան օրինակելի գործարաններ, իրանց հմուտ արհեստներով հանդերձ. այդ գործարանները մէջ գերազանց ու լայնածաւալ տեղ է բռնում մեքենայագործութիւնը, մի արհեստ, որի մէջ ամբիովում են երկրագործութեան լոյսը ճիւղերը: Դա մեր օրերում մի շատ կարևոր արհեստ է, մասնաւոր գիւղատնտեսութեան մէջ: Երկրագործութիւնը բարդ և դժուար արհեստ է: Նա իր հետ կապում է և ուրիշ արհեստներ, ինչպէս, օրինակ, գլխաւորապէս փայտագործութիւնը: Այդ արհեստի լաւ ուսումնասիրողը ճշգրտութեամբ լուծում է նաև միւս արհեստների դադարները:

Ամեն մի արհեստ, իր յայտնի պայմաններով կարելի է կապել գիւղատնտեսութեան հետ, բայց մասնաւոր, իմ կարծիքով, երկամագործութիւնը: Ուրբախել է, որ այսօր Բազում կարելի է հանդիսել բազմաթիւ հմուտ հայ արհեստագործներին, որոնք մեծ մասամբ պատանկական հասակում պանդխտացած լինելով այստեղ և ծառայելով մեքենայագործութեան գործարաններում, սովորել են այդ արհեստը: Բայց տիրութեամբ պէտք է ասել, որ զրանց հմուտութիւնները սպաւում են միայն նոյն իսկ այստեղ: Գրանք պատանի հասակում գիւղերից պանդխտանալով, դեռ ևս իրանց կեանքում գործարար չը լինելով գիւղական մշակի ծանր գործիքները, ընտելացել են քաղաքային կեանքին: Գրանք այժմ խորթ է թվում գիւղական կեանքը, զօւցէ և ամաչում են գիւղացու անուր կրելու... Այդ պատճառների ազդեցութեան տակ նրանք կաշկանդվում են քաղաքային մթնոլորտում, և ամուսնանում, հաստատվում են այստեղ, թողնելով գիւղում իրանց ծնողներին, մօտիկ ազգականներին, իրանց պատկանելի և իրանց ձեռքով մշակելի հողերը և այլն: Ուրեմն նրանք այլ ևս պանդխտ չեն համարվում, այլ քաղաքում հաստատված գաղթականներ իրանց կնոջ ու որդիկներնցով հանդերձ: Ուրիշ ինչ կարող էր անել այդ գիւղացին, նա իր այժմեան պարագումունքից՝ արհեստից, համեմատաբար աւելի է շահվում, քան գիւղում գիւղական պարագումունքից, և որ ամենադիտարար է նա այժմ գիւղական աշխատանքները կատարելու այլ ևս անընդունակ է: Այդպիսիների թիւը քիչ չէ, բայց և քիչ չէ այնպիսիների թիւը, որոնք իրանց ճարտար արհեստներով և թարմ ու առողջ հայեացքներով են օժտված գիւղական կեանքի համար:

Քաղաքում ապրող արհեստագործի համար վերում ակնարկելի որ նա համեմատաբար առաւել է շահվում, քան գիւղում կը շահվէր, սակայն դա համեմատաբար է միայն Բազմաթիւ պատճառների ազդեցութեան տակ արհեստներն էլ սկսում են օրից օր ընկնել, զրկելով արհեստագործին գոհացուցիչ հասոյթից: Գուցէ մի քանի տարիներից յետոյ արհեստագործը այնպիսի պիտի վարձատրվի, որքան գիւղացին իր անտեսական պարագումունքից: Բայց սրանից արհեստագործը զբաղաւորված է հարստահարողների զբաղաւորված են ինքնապաշտպան կայ, ազատ, թէկուզ քրտնալից վարձատրութիւն կայ, դա աւելի թանկ է մի անհատի համար, մասնաւոր երբ նա իր վարձը ստանում է բնութեան ամենապահով ծոցից: Այո, մեր մէջ արդէն կան հմուտ արհեստագործներ, որոնք հակամուտ են գիւղական աշխատանքի առաւելութիւնները, ցանկանում են կապել իրանց և իրանց աշխատանքի առաւելութիւնները, ցանկանում են կապել իրանց և իրանց աշխատանքի առաւելութիւնները: Բայց ինչ մեքենայագործից երկու հատը ինձ յայտնի են, առաջինը կալելու մեքենայ է, որը համարվում է մարդը ինչպէս քաղաքում: Թող մեր երիտասարդները իրագործեն այդ վայելուց և բարեբեր ձգտումները: Թող նրանք հաւատացած լինեն, քանի որ իրանք հըմուտ արհեստագործներ են, որ կապելով արհեստը երկրագործութեան հետ՝ գիւղատնտեսութիւնը երկրագործութեան ընթացքում սովորած արհեստը և թէ իրանք այդ տեսակ գործնական և օգտակար դրամաւորում միանդամայն գեղեցիկ օրինակ են տալու իրանց ազգային համագիւղացիներին ու ընդմիջապահովելու են իրանց այժմեան խախուտ և անհիմն վիճակը: Որտեղ գործը անհատի ուժից վեր է, այնտեղ թող դիմեն հաւաքակալներն և ձեռնարկած գործին անշուշտ կը նպաստէ իրանց ունեցած անձնաճանաչութիւն կայ, այնտեղ կան և հաւաքական ուժեր, որոնց օգնութեամբ միայն կարելի է առաջադիմել և ամեն գիւղատնտեսութիւնը կրա յաղթանակը տանել:

Գուցէ մի քանի տարիներից յետոյ արհեստագործը այնպիսի պիտի վարձատրվի, որքան գիւղացին իր անտեսական պարագումունքից: Բայց սրանից արհեստագործը զբաղաւորված են ինքնապաշտպան կայ, ազատ, թէկուզ քրտնալից վարձատրութիւն կայ, դա աւելի թանկ է մի անհատի համար, մասնաւոր երբ նա իր վարձը ստանում է բնութեան ամենապահով ծոցից:

Այո, մեր մէջ արդէն կան հմուտ արհեստագործներ, որոնք հակամուտ են գիւղական աշխատանքի առաւելութիւնները, ցանկանում են կապել իրանց և իրանց աշխատանքի առաւելութիւնները: Բայց ինչ մեքենայագործից երկու հատը ինձ յայտնի են, առաջինը կալելու մեքենայ է, որը համարվում է մարդը ինչպէս քաղաքում: Թող մեր երիտասարդները իրագործեն այդ վայելուց և բարեբեր ձգտումները: Թող նրանք հաւատացած լինեն, քանի որ իրանք հըմուտ արհեստագործներ են, որ կապելով արհեստը երկրագործութեան հետ՝ գիւղատնտեսութիւնը երկրագործութեան ընթացքում սովորած արհեստը և թէ իրանք այդ տեսակ գործնական և օգտակար դրամաւորում միանդամայն գեղեցիկ օրինակ են տալու իրանց ազգային համագիւղացիներին ու ընդմիջապահովելու են իրանց այժմեան խախուտ և անհիմն վիճակը: Որտեղ գործը անհատի ուժից վեր է, այնտեղ թող դիմեն հաւաքակալներն և ձեռնարկած գործին անշուշտ կը նպաստէ իրանց ունեցած անձնաճանաչութիւն կայ, այնտեղ կան և հաւաքական ուժեր, որոնց օգնութեամբ միայն կարելի է առաջադիմել և ամեն գիւղատնտեսութիւնը կրա յաղթանակը տանել:

**ՆԱՄԱԿ ԽՐԱԳՎՐԻՆ**

Թիֆլիս, ապրիլի 5-ին  
Խնդրեմ բարեհաճէք սպազրելու հետեւեալ մի քանի տող գրութիւնս: Անցեալ 1888 թ.ի ամառը Սուրբ գիւղում դստկանուի, նկատելի որ այնտեղի հայոց եկեղեցում ժամաչապիկների քնուրթիւն կար, ուստի նոյն տեղ ամբարանց եկող հայ ընտանիքներից փող հաւաքեցի և այդ պահաւ լրացուցի: Այդ գործի մէջ ինձ յօժարութեամբ օժանդակեցին հետեւեալ յարեղի տիկնայք:

- Տիրուհի Սուզանահանց 1 ռ., Տիրուհի Կ. Տէր-Ստեփանեանց 2 ռ., Տ. Փ. Մնացականեանց 3 ռ., Տ. Մ. Ժամանարեանց 3 ռ., Տ. Հ. Թումանեանց 3 ռ., Տ. Կ. Մուշաբե՛ 3 ռ., Տ. Ա. Շահազարեանց 2 ռ., Տ. Օսանիսեանց 2 ռ., Տ. Գուլբէյի 2 ռ., Տ. Կ. Բաբայանեանց 1 ռ., Տ. Մ. Գաւթեանց 1 ռ., Տ. Շարոյեի 1 ռ., Տ. Ս. Երեցեանց 1 ռ., ընդամենը 25 ռուբլի:

Այդ դուժարով զննեցան հետեւեալ առարկաները. վեց սպիտակ ժամաչապիկ, երկուսը ծաղկաւոր չիթից, և երկուսը բրդեայ ընտիր գործուածքից և մի պատկեր:

**ՄԵՐՈՒՆԻ ԵՐԻՑԵԱՆՑ**

**ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

«Մշակի» հետեւեալ համարը (№ 41), Զատիկ տօները պատճառով կը հրատարակեն հետեւեալ հինգաբլթի, ապրիլի 13-ին:

Երէկ, Պետերբուրգից վերադառնալով, Թիֆլիս հասաւ իշխան-կառավարապետ Գոնդուկով-Խորտակով:

Մեզ խնդրում են սպազրել հետեւեալ: «Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը, ստացած լինելով Բաթումի հայ հասարակութիւնից 58 հոգու և կաղզուանից 22-ի ըստորագրութեամբ յայտարարութիւններ՝ ընկերութեան տեղական վարչութիւններ յիշեալ քաղաքներում բանալու ցանկութեամբ, ներկայ ապրիլ ամսի 1-ին իր կայացած նիստում որոշումն արաւ՝ տալ տեղական վարչութիւններ բանալու համար խնդրում թողաւթիւնը յիշեալ հասարակութիւններին»:

Կիրակի երկուշաբթի, ապրիլի 2-ին, կայացաւ Թիֆլիսի ժողովարանի դահլիճում վրաց հոգևոր կոնցրեստը: Խորական եկեղեցական երգեր, սուսաց և վրաց լիզուով, բաւական աչոգութեամբ երգվեցան: Բայց լսողներ թիւը դահլիճում բազմիկ չէր:

ԲԱԳՈՒՅՑ մեզ հաղորդում են հետեւեալ հետաքրքիր լուրը: «Սյսեղի մի քանի հայ արհեստագործներ ձեռնամուխ են եղել այլ և այլ գիւղատնտեսական գործիքներ պատրաստելու, Թիֆլիսում այս տարի կայանալի ցուցահանդէսն ուղարկելու նպատակով: Այդ մեքենաներից երկու հատը ինձ յայտնի են, առաջինը կալելու մեքենայ է, որը համարվում է մարդը ինչպէս քաղաքում: Թող մեր երիտասարդները իրագործեն այդ վայելուց և բարեբեր ձգտումները: Թող նրանք հաւատացած լինեն, քանի որ իրանք հըմուտ արհեստագործներ են, որ կապելով արհեստը երկրագործութեան հետ՝ գիւղատնտեսութիւնը երկրագործութեան ընթացքում սովորած արհեստը և թէ իրանք այդ տեսակ գործնական և օգտակար դրամաւորում միանդամայն գեղեցիկ օրինակ են տալու իրանց ազգային համագիւղացիներին ու ընդմիջապահովելու են իրանց այժմեան խախուտ և անհիմն վիճակը: Որտեղ գործը անհատի ուժից վեր է, այնտեղ թող դիմեն հաւաքակալներն և ձեռնարկած գործին անշուշտ կը նպաստէ իրանց ունեցած անձնաճանաչութիւն կայ, այնտեղ կան և հաւաքական ուժեր, որոնց օգնութեամբ միայն կարելի է առաջադիմել և ամեն գիւղատնտեսութիւնը կրա յաղթանակը տանել:

Մեզ գրում են ԲԱԳՈՒՅՑ հետեւեալը. «Վերջին տարիները այստեղի արհեստագործ դասակարգի մի յայտնի չըջանի մէջ սկսել է արժարժվել քաղաքային արհեստագործների ապագան բարեբեր հարցը: Արհեստագործները սկսում են հրատարակել գիւղական կեանքով և գիւղատնտեսական պարագումունքներով: Արհեստագործներից օժանդ ծրագրեր են կազմում՝ զէպի գիւղական կեանքը վերադառնալու: Սակայն իրանց այդ յայտերը իրագործելու գլխաւոր արգելքը կայանում է հէնց նրանում, որ մեծ մասամբ վճռողական կամքից զուրկ են»:

Կ. Պօլսի ազգային պատրիարքարանը մի շըրջարկականով տեղեկացրել է հետեւեալ անտեղի կարգադրութեան մասին, որ արել է կրօնական վարչութիւնը. «Ազգային կեդրոնական վարչութեան կրօնական ժողովն իւր վերջին նստութեան մէջ հետեւեալ անօրինութիւնը ընելով, որոշեց զայն յատուկ շըջարկականաւ ծանուցանել հոգևոր և ազգային պաշտօնէութեանց որ ի մայրաքաղաքի և ի գաւառու, պատուիրելով որ ի գործ դրուին անխափան: Նկատելով որ ի տեղիս տեղիս, այլ մասնաւորապէս ի մայրաքաղաքիս սկսած է նոր սովորութիւն մը հաստատուել ննջեցելուց դարեւան վրայ և շուրջը ծաղկեալ պատկեր և խաչեր դնել և տանիլ զայն յուղարկաւորութեան դադարի առաջին, նկատելով որ այս սովորութիւն անչարմար է մեր Եկեղեցու պարգւթեան, որոյ պատճառաւ արդիւնալ է և ի վհափառ Հայքապետն ամենայն Հայոց, որոշեց պատուիրել ընդհանուր հոգևոր և ազգային պաշտօնէութեանց որ այլ ևս չը թողարկեն դադարի վրայ կամ շուրջը պատկեր և ծաղկէ խաչեր դնել»:

«Աղքատութեան» կողմից վրաց դրամատիական սկումբը, ինչպէս երևում է, բաւական աչոգութեամբ է մրցում հայոց դրամատիական սկումբի հետ: Գրա ապացոյց կարող է լինել այն, որ, ինչպէս յայտնից, այս օրերս վրաց դրամատիական սկումբի ընդհանուր ժողովում, ակումբում անցեալ տարի ունեցել է աւելի քան 300 ռուբլի զեֆիցիտ: Զանազանութիւնը միայն նրանում է, որ հայոց դրամատիական սկումբը աղքատ է առանց ներկայացումներ տալու, իսկ վրաց դրամատիական սկումբը աղքատանում է ներկայացումներ տալով: Ինչպէս երևում է, երկու հարեան ազգերը յետադիմութեան մէջ էլ համերաշխութիւն են ուղում պահպանելու...»

Մեզ տեղեկութիւններ են հաղորդում, որ Թիֆլիսի պապէս կողմից «կահաւորված սենեակները», որոնց թիւը վերջին ժամանակներս զգալի կերպով մեծանում է, ընդհանրապէս անխաղ են և զուրկ ամենահասարակ յարմարութիւններից: Զարմանալին այն է, որ չը նայած այդ տեսակ հիւրանոցների անկարգ դրութեան և մեծ անլարմարութիւններին, զնեք շատ թանկ են, և միանգամայն անստուկի եկուր հասարակութեան մեծամասնութեան համար: Աւելորդ է ասել այդ տեսակ կահաւորված սենեակների կեդրոնութեան և բնակիւղներին տրվող անպէտք կեդրոններին վրա: Գոնէ այժմ մի փոքր հսկողութիւն լինէր, երբ եղանակը սկսել է տաքանալ, և երբ շատ զգալի է կեդրոնութեան աղքատութիւնը:

ՇՈՒՆԱՎԻՐԻՑ մեզ գրում են, որ աւաղակային

խմբերը հանգիստ չեն տալիս ամբողջ դաւաճանքի և իրանց յանդուգն արարքներով սարսափ են գցել ժողովրդի վրա: Տեղական իշխանութիւնը ոտի է կանգնել այդ աւազակներին դէմ, որոնց մէջ կան և Սիրիւրից փախածներ:

Գաւառներից մեզ հասած տեղեկութիւնները երևում է, որ ներկայումս ազգաբնակչութիւնը յատկապէս զինուորագրական հարցով է զբաղված: Զինուորակոչական ցուցակները արդէն յայտարարվում են և զինուորագրական ատեսաններին ներկայացվում են անհամար և անթիւ ընդհանրապէս երևում է, զեռ տարիներ պէտք է անցնեն, մինչև որ զինուորագրական ցուցակները ենթակայ չը լինեն այնքան սխալներով, որքան այժմ է նկատվում: Ինչպէս երևում է այդ հանդիմանքը մեծ ասպարէզ է բացել գաւառական ջաղապետներում բռն զրամ միջոցների և հարստահարող դրազիւնների համար, որոնք թեթևացնում են ժողովրդի գրգռանքը զանազան խնդիրներ գրելով և հաւատացնելով միամիտներին, որ նրանց կազատեն: Այդ միամիտներին, ի հարկէ, ոչքը չէ ազատում, բացի այն, որ նրանք զրկվում են իրանց վերջին կողմնակիցը:

Աւելորդ չենք համարում յիշեցնել, որ այս օրերս վախճանված երևելի գիտնական և քիմիկոս Միշել-Լեֆէր Երվանդի մասին (Մշակի) 1886 թիւ N 102-ի բանասիրական բաժնում տպագրված են բաւական մանրամասն տեղեկութիւնները նրա հարկարմեակի (նա մեռաւ մտ 103 տարեկան հասակում) առիթով, որը սրանից երեք տարի առաջ փարիզ տօնաց շատ չքի կիրպով:

Մեզ ուղարկված է այս օրերս հրատարակված «Սրբազան պատմութիւն նոր ուխտի» վերնագրով դասագիրքը, աշխատութիւն Սահակ քահանայ Սահակեանի: Աշխատասիրողը խոստանում է շուտով հրատարակել այդ դասագիրքը նիւթի մշակութիւնը, որը յանձնարարած է ուսուցիչներին:

Մեզ ուղարկված է հետեւալը տպագրու համար: «Բազում Սարգսիական ընկերութեան խորհուրդը ուղարկելով խմբագրութեանը այս փորձիկ հրատարակելով խմբագրութեանը արդարեւ նրան «Մշակի» առաջիկայ համարներից մէկում ի դիտութիւն ընկերութեան բոլոր անդամներին և հայ հասարակութեան բազում հայոց Սարգսիական ընկերութիւնը վճռել է հանդիմանապէս տօնել իր հիմնադրութեան 25-ամեայ յօբելեանը, որը լրանալու է ներկայ թիւի մայիսի 21-ին: Հանդիման կարգադրել յանձնաժողովը պարզ է համարում ծանուցանել այս մասին ընկերութեան բոլոր անդամներին և հայ հասարակութեան, յայտնելով միանգամայն թէ հանդիման լինելու է ներկայ 1889 թվականի մայիսի 21-ին, Բազում հայոց աղքատանոցի ընդարձակ սրահում այսպիսի եղանակով: Ընթերցումն 25-ամեայ համառօտ պատմութեան Մարգարական ընկերութեան, ճառարտութիւններ, երգատարութիւն, ընթերցումն ուղերձների, հեռագիրների և այլն: Ամեն զրուսոր հաղորդագրութիւններ խնդրում ենք ուղարկել ընկերութեան խորհրդի նախագահ պ. իր. Անտոնեանի հասցեով:»

**ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

ԱՐՏԱՔԻՆ ԵՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՄԻ ՔԱՆԻ ԵՐ ԿԻՐՆԵՐՈՒՄ

Վերջին ժամանակներս լոյս տեսած մի քանի նոր աշխատութիւններ և ստատիստիկական նոր տեղեկութիւններ ցոյց են տալիս, որ արբեցողութիւնը չափից դուրս առաջ է դնացել եւրօպական մի քանի երկիրներում, մասնաւոր Անգլիայում: Մեծ-Բրիտանիան այդ կողմից զգաւորութիւն ունի համարեալ թէ առաջին տեղերից մէկը բռնել:

Առաջ բերեց մի քանի թւանշաններ, որոնք պերճախօս կերպով աղացուցանում են այդ բանը: Անգլիայում, մի հետազոտողի տեղեկութիւններին նայելով, իւրաքանչիւր օր խմբում է 2 միլիոն հեկտարի տարածութիւն, իւրաքանչիւր մարդու վրա զաւիտ 6 լիտր: Ֆրանսիայի վերաբերմամբ այդ թիւը փոքրանում է. Ֆրանսիայում իւրա-

քանչիւր մարդու վրա զաւիտ է միայն 3 լիտր: Յայտնի է, որ Անգլիայում գոյութիւն ունի արբեցողութեան պէմ կուտ ընկերութիւնը, որը մի կողմից ուղղակի կուտով այդ ակտի դէմ, միւս կողմից տեղեկութիւններ է հաւաքում արբեցողութեան տարածման առիժանի մասին: Այդ տեղեկութիւններից երևում է, որ 1878 թվականի Անգլիայում խմբվածների վրա ծախսվել է մինչև և երեք միլիարդ ֆրանկ, կամ մօտ հարիւր ֆրանկ իւրաքանչիւր մարդու: Անգլիայում իւրաքանչիւր տարի արբեցողութիւնից մեռնում է աւելի քան 100,000 մարդ, իսկ Ֆրանսիայում ոչ աւելի քան 2,000 հոգի:

Արբեցողութեան հարցի ուսումնասիրութեան մէջ մի քանի հեղինակաւոր հետազոտողներ այն կարծիքն են յայտնում, որ Անգլիայում ամենատարածված հիւանդութիւնը արբեցողութիւնն է: այնտեղ բժիշկները մեծ մասամբ զրանից առաջ եկած հիւանդութիւնների բժշկելով են զբաղվում:

Աւելի ցաւալին այն է, որ թէ Անգլիայում և թէ Բրիտանիայում, թէ չքաւոր դասակարգի և թէ նոյն իսկ հարուստ դասակարգի մէջ գործ են զրկում այնպիսի խմբներ, որոնք աչքի են ընկնում իրանց թ ու ոչ լինելով և վերին աստիճանի գրգռող բնաւորութեամբ:

Քիչ չեն խմում և կանայք. նրանք էլ ունեն իրանց սիրած խմիչքները, որոնցով սովորաբար անդուհինները աշխատում են մոռանալ իրանց ցաւերը և իրանց վրա քոն բերել: Շատ են պատահում անգլիական դատարաններում լսել այնպիսի գործեր, երբ ամուսինները դատարան պատմութեան մասին, յայտնելով, որ նրանք անից ամեն բան տանում ծախում են, խմիչքներ դնելու համար:

Արբեցողութիւնը դարձել է ազգատութեան համար ճանապարհ հարժող մի ոյժ: Ստատիստիկական տեղեկութիւններից երևում է, որ այդ բոլոր աղքատներից, որոնք զկում են Անգլիայում բարեգործական հիմնադրութիւնների օգնութեանը, 75 պրօցէնտը կազմում են նրանք, որոնց տան մեծերը անձնատուր են եղել արբեցողութեան: Այդ դեռ բաւական չէ. Անգլիայում տեղի ունեցած ազանհարպանի դէպքերից 30 պրօցէնտը արբեցողութեան հետեւեց է:

Նոյն երկրները, թէև փոքր չափով, նկատվում են և եւրօպական ուրիշ երկիրներում: Չքաւոր դասակարգի մէջ մասնաւոր շատ տարածված է և տարածվում է արբեցողութիւնը, իբրև անհանգիստ մէկը: Ալգիօսը, — առաւ է այդ հարցի մէջ հեղինակաւոր կերպով, — ֆիլիպինյան քաղաքային հիմն է: Նա աւելի աղբիւրութիւն է գործում ուղերձի և նեարդային համակարգութեան վրա, և փչացնում է մարմնի օրգանների կանօնաւոր գործունէութիւնը: Նա շատ աղբիւրութիւն է անում մասնաւոր մարդու բարոյական կազմակերպութեան վրա: Այդ բանի աչքի ընկնող յատկանիշներից մէկը այն է, որ արբեցողը վերին աստիճանի անապրեքութիւն է ցոյց տալիս դէպի արդարութիւնը: Սովորական արբեցողը մի այնպիսի արարած է, որի ոչ մարմինը և ոչ ուղեղը առողջ գրութեան մէջ չեն դառնում:

**ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԲԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ**

Եկեղեցական վարժարան հիմնելու համար կազմված յանձնաժողովը գործունէութեան վերաբերմամբ Կ. Պօլսի լրագրիւններում կարգում ենք հետեւեալը. «Կիմանանք թէ Գարակէժօրիկի Գանձնաժողովը իւր վերջին նստին մէջ գործական եղանակներով մը յանդիման է եկեղեցական վարժարանի կոնցրօնի կողմից: Գանձնաժողովը կառավարել է եկեղեցական վարժարանը բանալ Արմաշու, Չարխաբան Ս. Աստուածածին վանուց մէջ և մինչև որ հրկիզուալ վարժարանը վերաշինուի, գործածել վանուց տրամադրելի մէկ մասը. նորագործեան և կահաւորման ծախքերը հողալ նուիրատուութեամբ, և վարժարանին պահպանութեան յատկացնել Արմաշու վանքին և Գարակէժօրիկի եկեղեցւոյն հասոյթները: Գանձնաժողովը կը յուսայ թէ այս միջոցներով հնար կը լինի դոնէ երեսուն աշակերտ պահել: Գանձնաժողովը ոչոյն առաջարկութիւնը մանրամասն տեղեկագրով մը պիտի մատուցուի Պատրիարք Զօրն կեդրոնական Վարչութեանը: Չիւրախայի «Խոսով» լրագրիւնը հաղորդում է հետեւեալ առնելի ռօքագործութիւնը. «Այտնի-

Ռափաս գաւառակին Պէլիւրից գիւղացի Ալի Մէսիան ու Կարահիմ անուն երեք չարագործք չըջակայ գիւղերէն մին ընակող Խօմէրի տունը կը կոխեն և Խօմէրը, կիներ ու մայրը մերկացնելով եռացած իւղ կը լեցնեն նոցա մարմնոյն վըրայ որպէս զի իրենց պահած դրամը ցոյց տան: Մայրը չը կրնալով դիմանալ այս սուկալի տանջանաց կը մեռնի, իսկ Խօմէր ու կիներ անոյց վիճակի մէջ կը գտնուին: Ոստիկանութիւնը ձերբակալած է չարագործներէ երկուքը:»

Մուշից «Արեւիք» լրագրին գրում են հետեւեալը. «Պուլանքէն Սուաջնորդարան հասած գրութիւնք որդալի իմն կը նկարագրեն անը տեղի ունեցած կրօնական բազմաթիւ ղեղձումներն, որը օր աւուր կը բազմապատկին ու աղէտաբեր հանգամանք մը ստացած են: Ի մէջ այլոց կը պատմուի թէ հայը մը իր հարսը որոյ այրն կինդանի է և ներկայ, անձամբ տարեր է ուրիշ գիւղ մը և տեղոյն քահանայից միջոցաւ պատկել տուեր, առանց երէք ակնածելու և առանց ամչնալու գէթ իր օրդոյն պատիւն անձամբ վաճառելու այս չտես վատութեան համար: Որք զբերնք և իր թողուքը: Չը մոռանանք ըսել նաև թէ այսպիսի անոյց ղեղձումներ նոյն իսկ Մշոյ դաշտին մէջ ալ տեղի կուսենան ու կը շատանան Իշտատի, ուր կը ընակի մեր ժողովրդեան ամենէն կրօնասէր և ջերմեանք մասն, այս միջոցներու երկիրութեան մի ղեղձում պատահեր է, որոյ վրայ բոլոր գիւղացիք յուղեւելով Սուաջնորդարան լցուեր են ու պատիժ կը պահանջեն օր էնք օր հաւակ ու ըն ուղի: Կրկնապատմութեան հեղինակի հայրն իսկ կաղապարել թէ՛ եթէ ձեռքը անցնէր տղաս, իմ ձեռքը դատաւան կընէի և առաջին հարուածը ես կուտայի նմա: Հակառակ այս կրօնական նախանձախնդրութեան, հոն ալ մուտ գտած են կրօնական ղեղձումներ, երևակայելու է թէ՛ ուրիշ տեղեր ինչ աստիճան է:»

Գարունը սկսել է, բայց Հայաստանի զիւղացին փոխանակ դաշտը գնալու՝ պանդխտութեան դաւազան է ձեռք առել: Ահա թէ ինչպէս են նկարագրում արտասահմանի հայ լրագրիւնը այդ երևոյթը Մուշի կողմերի վերաբերմամբ. «Մշոյ դաշտի գարունը կիկեր է, բայց մեր երկրագործը փոխանակ իր արքեւ կը թաւալու, իր հերկ տեսնելու, իր լուծը լծելու, և Աստուծոյ հրամանին համաձայն քըր-տա մը երեսօց իր հացիկն ու տեղու, ահա խուճի խուճի կազմած օտարութեան կը դիմեն, և իրենց տնակը կը յանձնեն նորեկ թըռչնոց: Մարդահամարի պաշտօնէութեան Անեկի դուռն ամէն օր կարելի է տեսնել չինականաց բազմութիւններ, որք կարկատած տրեխներով փայտը ձեռքին՝ նստած արախճան դիւին կանգնած են, կը սպասեն անցազրի, որ անունն ու ջալին հեռանան, թերևս առանց կտոր մը պաշարի, առանց յուսոյ և լուսոյ, միայն թէ հեռանալ կորչեն և կը հեռանան... Վարուցանքի ժամանակն է, պէտք է սերմանել, պէտք է հերկել և ամառուան հունձը հասցնել, ալ զքաղաքաբար շատերուն սերմանելը ալ չը կայ, և ոչ ուտելիք, չը գիտեն թէ ինչպէս ընեն, թէ այս տարի գոնացուցիչ չը լինին երկրագործի վար ու վատասին, թէ հերկուած արտեան առանց սերմանուելու մնան խաչան, վնայ է երկրագործին և մահ իւր գաւակին, և թէ իրաց լիճակը շարունակէ այս տարի ալ, Մշոյ պայծառ դաշտը պիտի խամրի ու խաւարի:»

Թիւրքիայի ֆինանսները մինխտը Յակոբ փաշայի գործունէութեան վերաբերմամբ Կ. Պօլսի «Levand Herald» լրագրիւնը գրում է հետեւեալը. «Հինգշաբթի օրն սկսաւ դործադրութիւնն այն բարենորոգմանց, որք ներմուծած են Ելմետական նախարարութեան վարչական գրութեան մէջ և որոց նպատակն է հարուակալութեան աւելի ուղիղ եղանակ մը և մանրամասն ու անմիջական ընդդրը մը հաստատուել: Այդ բարենորոգմանց, որք կը վերաբերին ելմետական վարչութեան ներքին մանրամասնութեանց, արժանի են ընդհանուր հաւանութեան, վասն զի անհրաժեշտ են իր սկզբնաւորութիւն մը յառաջիկային մէջ լինելիք աւելի ընդարձակ բարենորոգմանց: Իւր բարենորոգմանց ծրարոյն մէջ Յակոբ փաշայ ի մաստալութեամբ սկսած է ի հիմանց և այսպէս աւելի կարևոր բարենորոգմանց հիմքեր կը դնէ: Գոհացուցիչ է իմանալ, որ Ն. Ալեքսեւիչի կը պատաստուի օտար հպատակաց մասնաւոր պահանջից լինողով ալ զբաղել Բացորոշ խոստումներ եղած են Պ. ար Զիլը: Գոհուած դուռնալէն կարգադրել այդ կարգի պահանջներն, որք երկար

ժամանակէ հետէ առկա կը մնան: Կարելի չէ տարակուսել, որ այդ խոստումներ ճշդիւ չը պիտի դործադրուին: Մինչև իսկ յուսալի է թէ այս առթիւ կարգադրուին նաև հայիւններն այն օտարականաց, որոց խոստում մ'ալ եղած չէ: Այս ընթացք մեծապէս կը նպաստէ պետութեան վարկին և աւելի ևս կը բարձրացունէ այն կարծիքը, որ Յակոբ փաշայի ներմուծած բարեկարգութիւնն ու կանոնաւորութիւնը յառաջ բերած են օտար երկրաց մէջ: Յակոբ փաշա պատիւ բերու իր վեհապետին և ինչն իսկ արժանապատիւնը յարգանաց, և եթէ Ն. Ալեքսեւիչի պահէ այն համբաւը, որ շահեցաւ, թէ իւր տուած բոլոր խոստումները կը կատարէ, Եւրօպոյ հանրային կարծեաց վրայ նախանձելի ասպարուսիւն մը յառաջ պիտի բերէ:»

**ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

«Փարիզի «Petit Journal» լրագրիւնը հաղորդում է, որ Ֆրանսիական ժամադրանքներն հրամայած է ձերբակալել Բուլանժէին, Ղիլիօնին և Բոչֆօրին: Ժամադրանքին վարչութիւններն յանձնված են այդ երեք անձանց լուսանկար պատկերները:

«Աւելի և աւելի է հաստատվում, որ դենբրալ Բուլանժէ շատ մօտիկ յարաբերութիւններ ունի բնապարտեան կուսակցութեան հետ: Բրիտանի «Independ. Belge» լրագրիւնը պնդում է, որ Բուլանժէ շատ անգամ զաւիտ էր Բրիտանի պրինց թէրոմ Նապօլէօնի հետ տեսակցութիւն ունենալու համար:

«Փարիզից հեռագրում են, որ Ֆրանսիացի յայտնի քիմիկոս, 103 տարեկան պրօֆէսոր Երվանդ մարտի 28-ին վախճանվեց:

«Գերմանական կայսր Վիլհելմ, Լոնդոն ուղևորվելու ժամանակ տեսակցութիւն կուսենայ Անտիլբարնում Լէօպոլթ թագաւորի հետ:

«Բելգիական պատգամաւորների ժողովում հարցապնդում է արված թէ՛ իրաւի յարմար է համբերել Բուլանժէի ներկայութիւնը Բելգիայի սահմաններում:

«Արեւելահայկալի մասնետական ազգաբնակչութիւնը բողոք է ներկայացրել թիւրքաց կառավարութեան, որով գանդաւում է բողոքաբարական պաշտօնեաների ճնշումները դէմ:

«Բնրլինի պալատական ջարդիչ Տօնկերին կառավարութիւնը հրամայել է չը խառնել որ և է ջարդարական ազիտացիայի մէջ. հակառակ դէպքում նա անմիջապէս կը զրկվի իր պաշտօնից:

**ԽԱՆ ԼՈՒՐԵՐ**

Ինչպէս հաղորդել է արդէն հեռագրիւր, այս օրերս վախճանվել է Անգլիայում երևելի անգլիական քաղաքական գործիչ Ջոն Բրայտ: Նա ծնվել է 1811 թվին, ուրնմ 78 տարեկան էր: Նա իր ամբողջ կեանքը ասպարիպում ազատ առևտրի պաշտպան էր, նա նոյնպէս պաշտպան էր և բանաբարված իրաւներդարի իրաւունքների, բայց վերջը հրաժարվեց այդ դասը պաշտպանելուց, բաժանվելով Վալտոնի կուսակցութիւնից: Նա ընդդէմ էր Ղիլիմ պատերազմին, և դուրս եկաւ Վալտոնի միջնաբերդից հակառակ լինելով ճիշտօրոյ արշաւանքին: Բրայտ մասնակցեց վերջին քաղաք դարում Անգլիայի բոլոր նշանաւոր բէթօրմներին: Առաջին անգամ նա ընտրվեց համայնքների ժողովի անգամ դեռ 1843 թվին:

«Փարիզի ցուցանանքին առիթով կառուցված էրիկի աշտարակը 300 մետր բարձրութիւն ունի: Այդ բարձրութեան վրա ցրված է Ֆրանսիական ազգային դրօշակը: Աշտարակը հինգ տեղաւոր ունի՝ և ամենաբարձր տեղաւոր վրա կը տարվի էլեկտրական լուսաւորութիւն, որի լոյսը կը տիւրի 72 վէրստ չըջապատ տարածութեան վրա: Աշտարակի ամենաբարձր տեղաւոր վրա ստատիկ ցուրտ է անում, այնպէս որ այնտեղ եղած բանօրները հազած ունեն մազեղէն շորեր: Արում են որ աշտարակի բարձրութիւնից տեսարանը դիւթի է:»

«Մի երիտասարդ ներկայանում է գերմանական կիլ ջարդարի համալսարանի բժշկական ֆակուլտետը և առաջարկում է անատոմիայի պրօֆէսորին առնել իր կմախքը անատոմիական կարիքի համար: — Բայց դուք դեռ կենդանի էք և այնքան առողջ ու յողթանդամ, որ երեք դեռ երկար ժամանակ կարելի էր բերել ձեր պէտք է ստանանք ձեր կմախքը... — Բայց ինձ փող է հարկաւոր, պ. պրօֆէսոր, պատասխանում է իր կմախքը ծախող պարոնը: — Կարող եմ հարցնել, ինչի համար...»

—Ես դիտարկութիւն ունեմ գաղթել Ամերիկա և ճանապարհածախսի համար հարկաւոր դումարը չունեմ:

Մի գեղացի դաւով քաղաք մտնում է տպարանը և պատուիրում է 50 հատ հրատարակութիւնը իր աղջկայ հարսանիքի համար:

—Արժէ միթէ 50 հատ պատուիրել, ասում է տպարանատէրը. դա ձեզ աւելի թանկ կը նրստի... քանի շատ պատուիրէք, օրինակ 100 հատ, կամ 200 հատ, այնքան աւելի էժան կը նստի տպագրութիւնը: Իսկ եթէ 300 հատ պատուիրէք, իւրաքանչիւր հրատարակութիւնը ձեզ հազիւ 1/8 կօպէկ կը նստի... վերջապէս քանի շատ պատուիրէք, այնքան էժանանայ տպագրութեան գինը:

—Ես այդ չը գիտէի, պ. տպարանատէր, յանկարծ վրա է բերում միամիտ գիւղացին... Ուրեմն, ասացէք խնդրեմ, ինչքան քանակութեամբ պէտք է տպագրեմ հրատարակութեան, որպէս զի տպագրութիւնը ինձ ոչինչ չը նստի...:

Թիֆլիսցի մի հայ, որը շատ խելոքներէն չէ, այս օրեր հանդիպում է փողոցում իր մի ծանօթ վրացուն, որի մայրը հայ է եղել:

—Գիտես, բարեկամ, ինչի դու խելոք ես, ասում է հայը վրացուն:

—Ձե, չը գիտեմ...  
—Որովհետեւ մայրդ հայ է եղել:  
—Ապա, եթէ այդպէս է, պատասխանում է վրացին, Ատտուած ինչի քո գլխին խոռով կացաւ... Հայրդ էլ, մայրդ էլ հայ են եղել,—այսց դու էլի ախմախ դուրս եկար...:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒՍԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱՎԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 ապրիլի: Երէկ տեղի ունեցաւ հարգարկեցութեան ճանապարհների միջնորդ Պատկերի թղթումը: Բողոքականները ս. Աննայի եկեղեցում ծիսակատարութեան ժամանակ ներկայ էին Մեծ Իշխանին վաղիմիր Ալեքսանդրովիչ և Նիկոլայ Նիկոլայիչ Անդրանիկը և շատ բարձրագիւր անձինք: Վերջին գիտութեան պատուի ցուցին մասնակցում էին էլք-գլխարկայի սապօրների և թղթանօթածիք դորաբաժինները: Մինչև Նիկոլայի պրոսպեկտը յուղարկաւորութեան հանգիստին ձեռով ուղեկցեց Մեծ Իշխան վաղիմիր Ալեքսանդրովիչ: Փաղոմը յայտնի ձեռով տեղի ունեցաւ բողոքականների Սեօղենեան գերեզմանատանը:

ՓԱՐԻՋ, 4 ապրիլի: Բուլանժեան լրագրիչների խօսքով, կայանաւորված թղթերի մէջ կան և այնպիսի թղթեր, որոնք ապացուցանում են, թէ Վիլիսն և Բուլանժէ պայման են եղել կապած ամերիկացի Մակոնի և Բեննետի հետ: Այդ պայմանի դորութեամբ, յիշեալ ամերիկացիները պէտք է մասակարարէին գինեբալ Բուլանժէին միլիոններ, որոնք պէտք է օրէնքին նրան իշխանութիւնը ձեռք բերելու: Իսկ Բուլանժէ, իշխանութիւնը ձեռք բերելուց յետոյ, պարտաւորվում էր արտօնութեան տալ նրանց օգտվելու Ամերիկայի և Յը. րանսիայի մէջ եղած հեռադրական գծից: Միւս թղթերից երևում է, որ Բուլանժէ աշխատում է եղել յուզել զօրքը մի կապիտանի միջնորդութեամբ, որը զաղանի յանձնարարութիւններ էր կատարում Բուլանժէի մօտ, երբ վերջինը գիտութեան միջնորդ էր: Այդ կապիտանը, ինչպէս հաղորդում են լրագրիչները, շուտով կը ձերբակալվի վերադառնալով երէկ տեղի ունեցած Բուլանժէի թանկեղէնը 800 մարդու համար էր պատրաստված: Հաշի ժամանակ արտասանվեցան շատ ձառեր:

ՓԱՐԻՋ, 4 ապրիլի: Միջնորդութիւնը հրամանարկ է պրէֆէկտներին թող չը տալ, որ քաղաքային խորհուրդները գրաստի խորհրդակցութիւններ անեն ընտրողների հետ:—Երէկ Բուլանժէի, Վիլիսնի և Բոչֆօրի քնակարաններում նրանց շարժական կապի վրա պաշտօնական արգելք դրվեց: Օպպորտունիստները սկսել են աշխատել անկախ առաջարկութիւնը, որ կառավարութիւնը զաղարկեցի: Բուլանժէի կողմնակիցների անընդհատ երթնակութիւնը փարիզից դէպի Բրիտանիա:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 ապրիլի: Այսօր ուղևորվել է վերնայից դէպի Բերլին դեսպան կոմս Շուվալով: ՕՒԷՍԱ, 5 ապրիլի: Աշնանացան ցորենի հունձը բաւարար է:

ՓԱՐԻՋ, 5 ապրիլի: Քննիչ և մեղադրական յանձնաժողովը երէկ տեղի ունեցած երկու նիստերում մեղծեց լրագրիչներին տեղեկութիւններ տալու առաջարկութիւնը, որոնցով պահպանել անպայման գաղտնիք և սկսեց գործին վերաբերել զօրկամայնների քննութիւնը:—Քննիչ յանձնաժողովի նախագահի հրամանով կատարվեցան անայլին խուղարկութիւններ Բուլանժէի, Վիլիսնի և Բոչֆօրի մօտ: Ներքին գործերի միջնորդը առաջարկեց պրէֆէկտներին արգելել հասարակական կարգը խանգարող փողոցային ցոյցեր:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ Ապրիլի 4-ին

Table with 2 columns: Item description and Price. Includes items like Ընդունի վրա 10 Ֆունտ արծե, Բերլինի վրա 100 մարկ, Փարիզի վրա 100 ֆրանկ, Ոսկի արծե, Մարապին կուպոններ, Արձաթ, Բորսային դիվիդենդներ, Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, Եր 4%, Արեւելան 5% փոխառութ. 1-ին շրջ., 2-րդ, 3-րդ, Ներքին 5% առաջին փոխառութ. հրկրորդ, 5 1/2% ընտա, Ոսկեայ ընտա, Եթերորդ. կոնսոլիդ. փոխառ., Նոր երկաթուղային ընտա, 5% զբաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ. մետ., Բրաւ. թղ. Ազնւ. բանկի, Գիւղական բանկի, 6% զբաւ. թղ. Թիֆլիսի—27 և 43 տ., Ս. Պետերբուրգի քաղաքային օրվ. զացիաներ, Մակոնի քաղաք. օրվ. զացիաներ, Երէկայի, Երէկայի, Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրվ., Ս. Պետերբուրգի բորսայի արտադրութիւնի հանդարտ է:

Խմբագիր-հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՐՈՒՆԻ

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM. ՅԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ե. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթնակութիւն ՄԱՐՍԵՒԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ չինգըարթի, ապրիլի 13-ին, ԱՆԱՏՈԼԻԱ (ANATOLIE) շոգեհաւոր, նաւապետ ԲՕՇԵԼ (BOSCHEL) դուրս կը դնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարաշլի: Տեղեկութիւնները մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում՝ Էմփոլուտի տան, Նարեքէժնայա, և Թիֆլիսում՝ նախկին Ար Տիւրանի գալլերեում, № 103.

ՊՐՕՎԻԶՈՐ Ա. ՇՏԵԻՆԻՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՏԱՄՆԵՐԻ ՅԱԻԻ ԵՒ ՓՁԱՆԱՎՈՒ ԴԵՄ

ՊՐՕՎԻԶՈՐ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹՈՒՆԵՐ 50 ԿՈՊ. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՈԿԱՑՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈՊ. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍ. ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Կովկասեան զեղա-վաճառատան, և պ. պ. Շահ-պարտեանցի, Մակկերի, Սէնչի-կոփսկու և Աքմարովի զեղա-տներում: ԲԱԳՈՒԻ մէջ, Բէկկէրի մօտ, ԳՈՒԹԱՅԻՍՈՒՄ՝ Կօկչեվի մօտ, ԱՏԱՎՐՈՊՈԼՈՒՄ Բրոսնոցիւ մօտ և ԵԿԱՆԵՐՆՕՒԱՐՈՒՄ: 8—52 (Հ.)


БОЛЬШАЯ ПРЕДПРИЯТИЕ ПАСПРОДАЖА ՏՈՆԵՐԻՑ ԱՌԱՋ ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ Կենտրոնական զաւանտերիական մագաղինում երևանեան հրատարակի վրա, տուն 20. բալովի, Սէմիարիայի և Սիւուէրի զիմաց: Ամեն տեսակ զաւանտերիական, մոդային և տան անտեսութեան առարկաներ ձերմակեղէն, կորսեմներ, ժերոէ, զգեստներ, զուլպաներ (տղամարդկանց և կանանց), Աքթոններ, նեպէտներ, կոսմէտիկան միջոցներ, մէլիփօրի և բրոնզեայ իրեր, լամպաներ, ամանեղէններ, երեկանների խաղալիքներ և այլն: 6—6

Abonnement-Einladung an die meist verbreitete deutsche Wochenschrift: Das Echo (Stimmen aus allen Parteien.) Wochenschrift für Politik, Literatur, Kunst und Wissenschaft. Das Echo bringt allwöchentlich in unterhaltender Form Berichte über alle politischen, wirtschaftlichen, wissenschaftlichen und gesellschaftlichen Vorgänge, welche sich in Deutschland und Auslande abspielen. Das Echo ist kein Parteiblatt, sondern es läßt die interessantesten Stimmen aller Parteien zu Worte kommen. Das Echo widmet außerdem dem Leben der hohen Kreise eingehende Aufmerksamkeit. Das Echo bringt in jeder Nummer ein bis zwei abgeschlossene Novellen, Erzählungen u. s. w. aus der Feder bewährter, zeitgenössischer Schriftsteller. Das Echo bringt informierende Notizen, Kritiken und Leseproben aus den bedeutendsten Erscheinungen des internationalen Büchermarktes. Das Echo betrachtet es insbesondere als seine Aufgabe, dem Leben und Treiben der Deutschen im Auslande die liebevollste Aufmerksamkeit zuzuwenden. Das Echo will somit unsern Landsleuten im Auslande ein „Votum aus der Heimat“ sein, deshalb ist auch sein Abonnementpreis ein sehr niedriger. Es versendet die Expedition in Berlin S. W. das Echo nach allen zum Weltpostverein gehörigen Ländern für 4 Mark 50 Pf. vierteljährlich und für 17 Mark ganzjährig, nach den Ländern und Gebieten außerhalb des Weltpostvereins für 23 Mark ganzjährig.—Zahlungen geschähen am raschesten und sichersten durch Postanweisung oder durch Anweisung auf deutsche Banken.—Ebenso liefert jede deutsche Buchhandlung und Zeitungsgesellschaft im Auslande das Echo zu den landesüblichen Preisen. Probenummern sind durch die letzteren zu beziehen oder auch direkt von J. S. Schorer, Verlag des Echo, Berlin S. W.

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է Հ Ա Մ Լ Է Տ Որերգութիւն 5 արարուածով, հեղինակութիւն վիւրիամ Եքսպլիկ թարգմանութիւն Սենեկերիմ Արքունու: Գինն է ճանապարհածախսով 1 րուբլի: Ստարաքաղաքացիք դիմում են Թիֆլիս. Կամալի Կամալի. Հրատարակիչ Բարսեղ Քամալեան 1—4

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ (Կուկիա, Վորժնոյի արձանի հանդէպ) Հիւանդներին ընդունում են ամեն օր ԱՌԱՒՕՏՆԵՐԸ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—10—11 ժ. վիրաբուժական, (և ատամնացաւ), սիֆիլիսի և աչքի ց. բացի կիրակի: ԲՈՒԳՎՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց. ԿԻՆՔԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՆ—11 1/2—12 ժ. կանանց և երեխայոց ց. ԲԵՆԿԻՆՎԱՍԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, թթի ց. և սիֆիլիսի: ԱՐՏԵՄԻՆՎ—12—1 ժ. երեքարթի, ուրբաթ և կիրակի, կանանց ց. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի: ԵՐԵՎԱՆԵՐԸ ԳԱԳՈՒՍԿԻ—5—6 1/2 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի: ՓՈՒՂԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրոտեղարկում): ԲԵՆԿԻՆՎԱՍԿԻ—6 1/2—7 1/2 ժամ. Հիւանդանոցում է մահկաբար ձուհիք Մօզեր և Երևանցեան: ՎՃար—50 կ.: Համարներդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ: Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ



Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры: 1) „Экономич. Положеніе Турецкихъ Армянь“, публич. лекція Д—ра Г. Арзруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Oekonomische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amirchanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amirchanjanz. Preis 20 kop. Иногородные, желающие получить брошюры, благоволят присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру. Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“. (b)